

ՎՐԱՍՏԱՆԻ ՉՈՐՐՈՂ ԼԱՆՏԱԳԱՅԻ ԵՐԴՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՐԴՎՈՒՄ ԵՄ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԿՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Նոյեմբերի 17-ին Թբիլիսիում, խորհրդարանի նախկին շենքի բակում տեղի ունեցավ Վրաստանի նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու երդմնակալության արարողությունը:



Արարողությանը ներկա էին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, վարչապետ Բիժինա Իվանիշվիլին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Սահմանադրական դատարանի նախագահ Գիորգի Պապուաշվիլին, Գերագույն դատարանի նախագահ Կոնստանտին Կուբլաշվիլին, Վրաստանի կառավարության անդամները եւ խորհրդարանի պատգամավորները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Արարողությանը ներկա էին նաեւ շուրջ 53 երկրից ժամանած պատվիրակություններ: Երդմնակալության արարողությանը Հայաստանը ներկայացրեցին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը ու էներգետիկայի եւ բնական պաշարների նա-

խարար Արմեն Մովսիսյանը: Երդմնակալման պաշտոնական արարողությունն սկսվեց ժամը 13-ին: Վրաստանի նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նախագահական երդումը տվեց ձեռքը դնելով Սահմանադրության եւ Աստվածաշնչի վրա: «Երդվում եմ պաշտպանել Սահմանադրությունը, երկրի անբողջականությունը», - պաշտոնապես անցնելով պաշտոնին՝ հայտարարեց նոր նախագահը: Երդման պաշտոնական տեքստից հետո Գիորգի Մարգվելաշվիլին ընդունեց ռազմական շքերթը, ստանձնելով երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պարտավորությունը: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գիորգի Մարգվելաշվիլին 44 տարեկան է, ծնվել է 1969 թվականին, սեպտեմբերի 4-ին: Ամուսնացած չէ, ունի դուստր: Ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետը, փիլիսոփայության գիտությունների դոկտոր է: Սովորել է նաեւ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտում, Կենտրոնական Եվրոպայի համալսարանում (Պրահա): Աշխատանքային գործունեությունն սկսել է 1992 թվականին, եղել է «Կավկասուս թրեվել» ՍՊԸ-ի խմբի լիդեր, զգայական իրավիճակի հոգեբանության լաբորատորիայի կրտսեր մասնագետ, Վրաստանի մշակույթի լաբորատորիայի կրտսեր մասնագետ, «Բիզնես օրագիր» ՍՊԸ-ի մարքեթինգի դեպարտամենտի պետ, Թբիլիսիի անկախ համալսարանի, փիլիսոփայության եւ մշակույթի դասախոս, ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) թարգմանիչ, ապա ասիստենտ եւ ծրագրերից մեկի ղեկավար, 2000-2012թթ.՝ Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտի (GIPA) դասախոս, հետազոտական դեպարտամենտի պետ, ինստիտուտի ղեկավար: 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում «Վրացական երազանք» կուլիցիայի հաղթանակից հետո նշանակվել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար, ապա՝ փոխվարչապետ: Ընթացիկ տարվա մայիսին կառավարող «Վրացական երազանք» կուլիցիայի կողմից առաջադրվել է նախագահության թեկնածու: Տիրապետում է անգլերենին եւ ռուսերենին:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԼԱՆԱՐԱՐՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԲԻՆԵՏԸ



Համաձայնությունն ստանալու համար Գիորգի Մարգվելաշվիլին համապատասխան նամակով դիմել է Վրաստանի խորհրդարանի մեծամասնությանը: Իրակլի Ղարիբաշվիլու թեկնածությունը, ինչպես նաեւ նրա կողմից ներկայացված նախարարների կազմը եւ կառավարության ծրագիրը պետք է հաստատի երկ-

ր խորհրդարանը: Իր հերթին Իրակլի Ղարիբաշվիլին, նոյեմբերի 18-ին ներկայացրեց նախարարների նոր կաբինետը, որն առաջիկայում կհաստատի խորհրդարանը: Բիժինա Իվանիշվիլու կառավարության բոլոր նախարարները պահպանել են իրենց պաշտոնները: Մասնավորապես, պաշտպա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐ ՉՈՒՑԻ

Երդմնակալության հանդիսավոր արարողության ավարտից հետո Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ընդունեց երդմնակալման արարողությանը Հայաստանը ներկայացնող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին ու էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանին:



Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն փոխանցեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորանքները եւ Հայաստան այցելելու հրավերը: Գիորգի Մարգվելաշվիլին գոհունակություն հայտնեց Վրաստանի եւ Հայաստանի միջեւ բարձր մակարդակի հարաբերությունների կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ երկուստեք (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

